



- Les avocats européens

Եվրոպական միգրացիայի ֆորում, աղբյուրը՝ ԵՏԿ

# CCBE Info

## N° 39 Հունվար 2015

Միգրացիայի ֆորումի առաջին հանդիպումը – Եվրոպական պառլամենտն իր դիրքորոշումն է հայտնում իրավաբաններին լրտեսելու կապակցությամբ – Փողերի լվացման դեմ ԵՄ նոր ընդլայնված կանոնները – Բելառուսի փաստաբանների պալատի հետ համագործակցությունը – ՄԻԵԴ 2014 թվականի տարեկան զեկույցը

### ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ՖՈՐՈՒՄԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ՀԱՄԱԵՄԲՈՒՄ Է ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆԸ և ԵՎՐՈՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻՆ

«Ապահով ճանապարհներ, ապահով ապագա, ինչպե՞ս կազմակերպել միգրանտների միջմայրցամաքային խառը հոսքերը» խորագրով Եվրոպական Միգրացիայի ֆորումի առաջին նիստը տեղի ունեցավ 2015 թվականի հունվարի 26-ից 27-ը: Եվրոպայի փաստաբանների միությունների և իրավական համայնքների խորհուրդը (ԵՓՄԻՀ) ներկայացնում էր ԵՓՄԻՀ միգրացիայի վերաբերյալ աշխատանքային խմբի անդամ Նոյեմի Ալարկոնը:

Եվրոպական միգրացիայի ֆորումը Եվրոպական հանձնաժողովի կողմից Եվրոպական տնտեսական և սոցիալական կոմիտեի հետ համագործակցությամբ ստեղծված հարթակ է, որի շրջանակներում քաղաքացիական հասարակության կազմակերպությունները և եվրոպական ինստիտուտները միասին հանդիպում են քննարկելու ներգաղթի, փախստականների և միգրանտների ինտեգրման հետ կապված հարցերը:

Ֆորումի նպատակն է հնարավորություն տալ քաղաքացիական հասարակությանը բարձրաձայնելու միգրացիայի, փախստականների և միգրանտների հետ կապված խնդիրները, ինչպես նաև թույլատրել եվրոպական ինստիտուտներին նպաստել միգրացիայի վերաբերյալ համապարփակ մոտեցման ձևավորմանը:

Կարդալ ավելին (անվերենով) այստեղ. <http://www.eesc.europa.eu/?i=portal.en.events-and-activities-european-migration-forum-1>



# ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՌԼԱՄԵՆՏՆ ԻՐ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆ Է ՀԱՅՏՆՈՒՄ ԵՄ-ՈՒՄ ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻՆ ԼՐՏԵՍԵԼՈՒ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱԲ

Հունվարի 13-ին տեղի ունեցած պլենար նիստի ընթացքում Եվրոպական պառլամենտի անդամները իրենց մտահոգությունները հայտնեցին հատուկ ծառայությունների կողմից Եվրոպայում իրավաբանների և նրանց հաճախորդների միջև հեռախոսային գանգերը գաղտնալսելու կապակցությամբ:

Նշված խնդիրն ի հայտ եկավ վերջերս, երբ Նիդերլանդների ներքին գործերի նախարարը խոստովանեց, որ Դանիայի անվտանգության հատուկ ծառայությունը տարիներ շարունակ լրտեսել է հոլանդական «Պրակեն ԴըՕլիվերա» իրավաբանական կազմակերպությանը: ԵՓՄԻՀ-ի ձեռք բերված տեղեկատվության համաձայն հատուկ ծառայությունները գաղտնի վերահսկել են իրավաբանների և նրանց հաճախորդների միջև տեղի ունեցած հաղորդակցությունները:

նմանատիպ գործերով Մեծ Բրիտանիայում, Ֆրանսիայում, Իռլանդիայում, Չեխիայում և Լատվիայում:

Եվրոպական պառլամենտի անդամները քաղաքական հարթության վրա դատապարտել են լրտեսության նման երևույթները և կոչ են արել ԵՄ-ին յուրաքանչյուր նման դեպքի առթիվ համապատասխան միջոցներ ձեռնարկել, ներառյալ քննություններ իրականացնելը, պատժի ենթարկելը և համապատասխան օրենսդրություն ընդունելը:

Կարդալ ավելին (անգլերենով) այստեղ. [\[Members of the European Parliament denounce surveillance of lawyer-client communications\]](#)

## ՕՐԵՆՄԴԻՐՆԵՐԸ ՀԱՄԱԶԱՅՆՈՒԹՅԱՆ ԵՆ ԳԱԼԻՍ ՓՈՂԵՐԻ ԼՎԱՑՄԱՆ ԴԵՄ ԵՄ-ԸՆԴԼԱՅՆՎԱԾ ԿԱՆՈՆՆԵՐԻ ՇՈՒՐԶ

Հունվարին Եվրոպական պառլամենտը և անդամ երկրները համաձայնության եկան ֆինանսական համակարգի միջոցով փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման վերաբերյալ 4-րդ դիրեկտիվի նախագծի վերջին տարբերակի շուրջ, որով թարմացվում են 2005 թվականի մեխանիզմները: Փաստաթղթում մի շարք փոփոխություններ են կատարվել, այդ թվում՝ հաշվետվության տրամադրման սահմանման մեջ ներառվել է նաև հարկային խորհրդատվությունը, հանցավոր գործունեության սահմանման մեջ ներառվել են նաև հարկային հանցագործությունները, որպես առաջնային հաշվետվության հասցեատեր ընդլայնվել են ինքնակառավարվող մասնագիտական մարմինների դերը և մասնագիտական գաղտնիքի պահպանման շրջանակները, հասարակության այն անդամներին, ովքեր գործում են «ի շահ հասարակության» (օրինակ, քննություն իրականացնող լրագրողները, շՎ-ները կամ այլ շահագրգիռ քաղաքացիները), ինչպես նաև դիրեկտիվում սահմանված կազմակերպություններին հասանելի է դարձվել կորպորատիվ և այլ իրավաբանական անձանց շահառուների վերաբերյալ կենտրոնական ռեգիստրներում գրանցված տեղեկատվությունը:

## ԵՓՄԻՀ-Ը ՄԿՍՈՒՄ Է ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԵԼ ԲԵԼԱՌՈՒՍԻ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՀԵՏ

ԵՓՄԻՀ-ի պատվիրակությունը 2015 թվականի հունվարի 27-ին Մինսկում հանդիպել է Բելառուսի փաստաբանների պալատի անդամների հետ: Այդ հանդիպումը, որպես 2012 թվականի հունիսին տեղի ունեցած առաջին հանդիպման շարունակություն, վերաբերվում էր ԵՓՄԻՀ-ի և Բելառուսի փաստաբանների պալատի միջև հնարավոր համագործակցությանը, որը ԵՓՄԻՀ-ի անդամ չի հանդիսանում:

Կողմերը համաձայնվեցին 2015 թվականի սեպտեմբերին Մինսկում կազմակերպել սեմինար, որտեղ կհավաքվեն Եվրոպական փորձագետները և Բելառուսի իրավաբանները և կքննարկեն ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող այնպիսի հարցեր, ինչպիսիք են՝ մեղիացիան, իրավաբանական օգնությունը և մասնագիտական գաղտնիքը:

## ՄԻԵԴ-Ը ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ Է ԻՐ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԶԵԿՈՒՅՑԸ

Իր՝ հունվարի 29-ին հրատարակած տարեկան զեկույցում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը մատնանշում է նախադեպային իրավունքի զարգացումները և տրամադրում է վիճակագրական տեղեկատվություն 2014 թվականի համար, ներառյալ յուրաքանչյուր պետության կողմից կատարված խախտումների աղյուսակային պատկերը:

Զեկույցում մատնանշվում է, որ թիվ 14-րդ արձանագրության (որով վերանայվեց Կոնվենցիայի հսկողության համակարգը) ընդունումից հետո կիրառվող նոր աշխատանքային մեթոդները հանգեցրել են արդյալված գործերի թվի 30%-ի մերժմանը: Այնուամենայնիվ, Դատարանը վերստին հայտնում է իր մտահոգությունը կրկնվող գործերի քանակի վերաբերյալ, որը կազմում է բոլոր առկախված գործերի թվի կեսից ավելին:

Կարդալ ավելին (անգլերենով) այստեղ. [\[Annual Report 2014 of the European Court of Human Rights\]](#)

## ԳԱԼԻՔ ՄԻԶՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

- 23-25/02/15 Համընդհանուր իրավունքի գազաթնաժողով, Լոնդոն
- 26-27/03/15 Փաստաբանների ֆեդերալ ասոցիացիայի կողմից կազմակերպվող 2-րդ միջազգային իրավաբանների ֆորում, Բեռլին